

Սուրեն Դ. Դանիելյան
Բանաս. գիյր. դոկտոր

ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Խ. Արովեանի ռոմանտիզմի և 19-րդ դարի գրական
շարժումների հետազոծով*

Հայ նոր և նորագոյն գրականությունն ունի մեկնութեան իր յայտնի շրջանները, որոնք ներկայացնում են գեղարուեստական մտածողութեան և գրական շարժումների ներհակ, հակասական, յաճախ նաև խճճուած իմացական անցումներ ու զարգացման նոր փուլեր:

18-րդ դարի վերջին քառորդից ի վեր, 20-րդ դարի սահմանագծին և առաւելապէս՝ Երրորդ հանրապետութեան ձևատրումից յետոյ գրականութեան պարբերացման հիմնահարցերը խորապէս հետաքրքրել և հետաքրքրում են նրա պատմաբաններին ու տեսաբաններին: Շատ յաճախ գրականութեան պարբերացումը դիտուել է ազգային-ընկերային ընդհանուր պատմական զարգացումների քննութեան ճանապարհով: Յայտնի իրադարձութիւնները իրենք են բերել նոր հանգրուանի, նոր շրջափուլի գիտակցութիւնը, և իւրաքանչիւր դէպքում գրողը կամ գրականութեան պատմաբանը անցեալին նայել է նորի բարձունքից, գրական հայեացքի տեղաշարժի գիտակցութեամբ:

Այդպիսին էր Խաչատուր Արովեանի մօտեցումը, երբ նա գերմանական գրականութեան անմիջական հմայքի ներքոյ փորձում էր վերակազմակերպել, իսկ աւելի ճիշդ՝ կազմակերպել հայ նոր գրականութեան ճանապարհը, որը մենք կոչում ենք, և ոչ առանց հիմքի, **արովեանական**: Ի դէպ, գրական պարբերացմանը զուգընթաց, հենց Խ. Արովեանի ժամանակից սկսուել են գրական ուղղութեան, շարժման աշխոյժ քննարկումները, որոնք իրենց սրութեամբ, յաճախ հանդարտ, յաճախ փոթորկոտ ընթացքներով բանավէճերի անվերջանալի շարան են բերել: Խ. Արովեանը, օրինակ, շիլլերեան իր ազդեցութեան չափաբաժնով ակնյայտ ռոմանտիկական-զգացական (սենտիմենտալ) գիծ էր սերմանել, որը դարձաւ նոր դպրոցի անկիւնաքար: Բայց քիչ չէին գրականութեան այն մշակները, մանաւանդ՝ գեղեիկ սոցիոլոգիզմի, նաև սոցիալիստական ռէալիզմի շրջա-

* Յօդուածն ընդունուել է տպագրութեան 10.09.2013:

Ե (ժԵ) քառի, թիվ 3 (43) հոլիս-մեպրեմբեր, 2013
ՎԷՄ համահայկական հանդես

նում, որոնք գտնում էին, որ Խ. Աբովեանի մեջ ճեպլիզմի տարրերի անվերապահ պաշտպանությունը հենց Խ. Աբովեանի պաշտպանությունն է: Սա անցել էր շնորհալի գրականագետներին, ինչպես ասենք, Նշան Մուրադեանին¹, Վաչե Պարտիզունուն և ուրիշներին:

Նկատենք, որ նոյն մեկնակետով գրականության ճեպլիստական ճանապարհի ենթակայական սևեռուն ընկալումը շատերի համար փրկարար հանգրուան է եղել Մ. Նալբանդեանի, Պ. Դուրեանի (Հրանդ Թամրազեան), Ռ. Պատկանեանի, Բաֆֆու («Իբերայ» ճեպլիզմ, Եղիշե Պետրոսեան), Վ. Տէրեանի («հոգեբանական» ճեպլիզմ, Հրանդ Թամրազեան) ստեղծագործական արժեքների պատմական ճանաչման առումով, սակայն ժամանակի մեջ նման խոտոր հայեացքները լայն գնահատության չարժանացան, և Պ. Դուրեանն ու Բաֆֆին մնացին դասական ժամանակի տիպաբանական սահմաններում, ինչպես կանխագծել էին Արշակ Չոպանեանն ու Սերգեյ Մարինեանը, իսկ Վահան Տէրեանը աւելի ու աւելի «հակուեց» սիմվոլիզմին:

Գնահատության այդպիսի մի վիճակ կար նաև Դանիել Վարուժանի պարագային, երբ Լևոն Էսաձանեանին ուղղուած նամակից օրուայ կարգախօսով ապրող խորհրդահայ գրականագետները երևան էին հանում արևմտահայ երգչի՝ փոխնիփոխ իրապաշտ, վիպապաշտ, խորհրդապաշտ լինելու պայմանականությունները²՝ անպայման ճեպլիզմին առաւելական

1 «Խ. Աբովեանի պոետիկան» շահեկան գրքում գրողի ստեղծագործության լուսագոյն հետազոտողներից Նշան Մուրադեանը, ապախնելով սոցիալիստական ճեպլիզմի երևութական և աննիւթ առաւելություններին, փորձել է հիմնաւորել ճեպլիզմի տեսակարար կշիռ պարունակող ներկայությունը հայ նոր գրականության հիմնադրի մօտ՝ հետևեալ ծրագրային յայտարարութեամբ. «Բայց... վերջիշենք ամենակարևորը. ժամանակիզմը մի արուեստ է, որ ժխտում էր իր ժամանակի հասարակական կարգը (միթէ Բաֆֆին կամ Պ. Դուրեանը «ժխտողների» շարքում են եղել Խ. Աբովեանի հետ - Մ.Դ.), Աբովեանը հաստատում էր այն. ժամանակիզմի իդէալը անհրագործելի էր, Աբովեանինը՝ համարեայ իրագործելի. ժամանակիզմը տանել չէր կարող պետությունը, Աբովեանը հանդուրժում էր այն (սա գրեթէ սոցիոլոգիական մեկնակէտ է յուշում մեզ - Մ.Դ.).»: Տես **Նշան Մուրադեան**, Աբովեանի պոետիկան, Եր., «Սովետական գրող», 1979, էջ 40:

Ապախնելով ռուս գրականագէտ Վիկտոր Վանսլովի՝ ժամանակիզմի տեսական գնահատականներին՝ հայ գրականագէտը կատարել է տրամաբանական կարգի մեքենայական հակադրման գուգահեռներ, որոնք բացայայտ վիճարկելի են մնում, մինչդեռ ժամանակիզմի և ճեպլիզմի տեսական այս անցումներում պիտի ընկած լինէին անվիճելիօրէն հանրայայտ դրոյթներ: Նկատելի է, որ հենց դրոյթների ընտրությունը կամայական, եթէ չասենք, սոցիոլոգիական բնոյթ է կրել՝ խիստ սերտաձելով իրապաշտական հայեացքի ծայրայեղացում գնահատականին:

Այսպէս, անստոյգ ու առկախ է մնում ժամանակիզմի իդէալի անհրագործելի լինելը, երբ գրականագէտը յայտարարում է, թէ Աբովեանինը իբր համարեայ իրագործելի է. բայց չէ՞ որ խօսքն այլևս Խ. Աբովեանի քաղաքական-ընկերային ձգտման մասին չէ, այստեղ բնորոշում է գեղագիտական բուն իդէալը: Կարելի է արդեօք ժխտել ժամանակիզմի պաթոսի մեջ ընկերայինի, հասարակականի նախադրեալը կամ Խ. Աբովեանին անհատապաշտութեան պարապրաքսից «փրկելով» ժամանակիզմի տեսությունը իբր յաղթահարած համարել: Ն. Մուրադեանը, գնայով երևոյթների գնահատութեան ընեռացման, կամայ թէ ակամայ արժեգրել է ժամանակիզմի յատկանիշների համակարգը: Դուրս է եկել, թէ իբր ժամանակիզմի գլխաւոր յատկանիշը երազայնությունն է, այնինչ կարծես միայն ճեպլիզմն է գրականութիւն բերում գործողութեան մարդուն:

Որոշ վերապահումով ընդունենք, թէ ժամանակիզմի լոզունգը զգացումն է, իսկ այս դէպքում Խ. Աբովեանի, հետևաբար, ճեպլիզմի կարգախօսը արդեօք մտքի ու զգացումնքի շաղխն է: Հակադրությունը չի տպաւորում. երկու հարցադրումներում էլ նժարը հակում է դէպի ժամանակիզմի պոետիկան:

2 Ինքը՝ Դանիել Վարուժանը, յայտարարում էր. «Մենք փոխնիփոխ կ'ըլլանք խորհրդապաշտ, ժամանակիզմ, դասական. հետևաբար գեղեցկությունը անթերի արտադրելու համար ես պիտի սիրէի

տեղ յատկացնելու նպատակադրութեամբ, և մոռանում էին, որ նա ունի իր յստակ նախասիրութիւնը ռոմանտիկական պատկերային կառոյցի հանդէպ: «Ըստ իս,- գրում էր արևմտահայ բանաստեղծը,- միայն ռոմանտիկ դայրոցն է, որուն սնունդը մեր ինքնատպութիւնը և հայութիւնը պիտի չեղծանէ»³: Այս խոստովանութիւնը նախասիրութիւն էլ չէր, այլ գրական դայրոցի, գրական շարժման և, ինչու չէ, գրական պարբերացման խորհուրդն անփոփոռ առաջնային միտք:

Դեռ շատ աւելի վաղ, ռուս վաթսունականների անմիջական հմայքի տակ Մ. Նալբանդեանին թուում էր, թէ ինքը ձևաւորում է ռուս բանաստեղծութիւնից ածանցուած յեղափոխական արժեհամակարգ, իսկ այն, որ «Երկրագործութիւնը...» գրականութեան համար մայրուղի է և «ծածկում է» միւս բոլոր ընկալումները պայքարի իր յայտնի շեշտերով, կասկած չէր յարուցում ռուսական միջավայրի ազդակներով սնուցում ստացած, հասունացած բանաստեղծի մէջ:

Ակներև է, որ փիլիսոփայական խորքով «Մտածութիւն», հեզնախառն ոճով «Նուէր Ամիրեանի», հանրայայտ «Մանկութեան օրեր» և այլ քերթուածներում բանաստեղծը գրականութեան զարգացման մայրուղին, «երկու ճանապարհներից» միակի ընտրանքը տեսնում էր ազգին ծառայութեան յորդորի, մարտակոչ հնչիւնների ու գաղափարների մէջ, իսկ ներանձնական «ապոլլոնեան» երգը համարում էր «թոյլերի» շնորհաբաժինը, որտեղ բարձրագոյն, բայց և խոտելի նպատակակէտը բանաստեղծի «սև» քնարի հակուածութիւնն էր՝ «զոհ բերել կեանքը սիրած աղջկան»⁴, ինչից և կտրուկ հրաժարում էր:

Արժեհամակարգերի ընտրութեան մէջ ռոմանտիկները միշտ խաղարկել են զոհաբերումի մոդէլը: Պարզապէս կեանքը իբրև նպատակ և զոհաբերումն իբրև այդ նպատակի իրագործման կարճառոտ ճանապարհ՝ սիրով են իւրացրել հայ գրականութեան մէջ՝ որպէս ուսուցիչ ի մտի ունենալով Մ. Նալբանդեանին: Յեղափոխականները արդէն ձևաւորուած, «տանիք կապած» ռոմանտիկներ են, և Մ. Նալբանդեանն էլ նրանց հետ հարկ չունէր իրապաշտի ծիրանի կրելու: Բայց որքան ճանապարհ է անցել նալբանդեանագիտութիւնը (այդ թուում նաև՝ շնորհիվ Աշոտ Յովհաննիսեանի, մասամբ՝ Սերգէյ Դարոնեանի), որ բանաստեղծին ազատի ոչնչակգմի «փրկարար» պատրանքներից:

«Երկու ճանապարհի» գայթակղութիւնը ձգողական ուժ է եղել ոչ միայն հայ, այլև ռուս և օտար գրական խաչմերուկներում: Այստեղ կար նաև գաղափարի և ներանձնականի սուր հակամարտութիւնը, որտեղ օգտապաշտ

տալ այս բոլորը միանգամայն, բնութիւնը՝ ինչ որ է և ինչպէս որ է, մէկ քերթուածի, մէկ տունի, նոյնիսկ մէկ տողի մէջ՝ մերթ ըլլալով միննոյն անգամ դասական և խորհրդապաշտ, ռոմանտիկ և գաղափարապաշտ: Ահա թէ ինչո՞ւ համար իրապաշտութիւնը յատուկ դայրոց մը ընդունիլը ծիծաղելի կը թուի ինձի, իսկ զայն չընդունիլը, ընդունելով միայն իր ստորաբաժանումները արուեստի սեղմում, շուէջի դիրքանուարում»: Տէս Դանիէլ Վարուժան, Նամականի, Եր., 1965, էջ 177-178 (ընդգծումը մերն է - Ս.Գ.):

3 Դանիէլ Վարուժան, Նամականի, էջ 63:

4 Միքայէլ Նալբանդեան, Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով, հ. 1, Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1979, էջ 104: Նոյն միտքը նոյն բառամթերքի լուսախաղով բացուած է նաև «Ապոլլոնին» բանաստեղծութեան մէջ՝ գրուած նոյն՝ 1859 թուականին. Ապոլլոնի տուած քնարից դժգոհ է էպիքական ընդոտ հերոսը, որի համար այն «պատիժ» է, ու ետ է վերադարձում՝ «Ա՞ն նորան ետ, ինձ պէտք չէ / Տնոր ուրիշի, ում կամիս...»: Նոյն տեղում, էջ 105:

փիլիսոփայությունը յաճախ ստանում էր արդարություն, ազգային մտածողության, սրբազան պայքարի «հանդերձներ»:

Դեռ միջադարեան շրջաններից, և աւելի վաղ, ընկերային երկրնտրանքի պայքարը գեղարուեստական մտածողության մէջ յաճախ պայմանաւորուել է հեթանոսական և քրիստոնէական առձակատումի ընթացքներով, ինչի մասին խօսել են մատերիալիստական փիլիսոփայութեան կարկառուն շատ դէմքեր:

Վլադիմիր Լենինը, օրինակ, շրջանցելով արուեստում հեթանոսական անդրադարձի գեղեցիկի ու բնութեան նախահիմքերը, հիմնականում վերաշեշտել է, կարելի է ասել՝ բացարձակացրել, անսխրունիզմի դրան առջև վերբերել կրօնապայքարի ընկերային գործօնները՝ յեղափոխական օրերի տեսլականի տրամաբանութեամբ: Այսպէս, Մաքսիմ Գորկուն յղած նամակում նա հասել է ուշագրաւ եզրակացութեան՝ նշելով, թէ՛ «Պատմութեան մէջ եղել է ժամանակ, երբ... դեմոկրատիայի և պրոլետարիատի պայքարն ընթացել է կրօնական մէկ գաղափարի դէմ միւսի պայքարի ձևով»⁵:

Չնայած միտումնաւոր բառաշփոթին՝ ակնբախ է, որ ծրագրային երկու դրոյթները վերաբերում են քրիստոնէութեան և հեթանոսութեան բախման դասակարգային բնոյթի ճանաչման անհրաժեշտութեանը: «Պրոլետարիատ» բառը մոդեռնացման սոսկական արտայայտութիւն չէ: Վ. Լենինն ուղղակի դեմոկրատիայի և պրոլետարիատի հասկացութիւնները շահարկում էր «յեղափոխական» դիրքորոշումից, այն է՝ առաջադիմութեան համար մղուող պայքարը, ի վերջոյ, պայքար է պրոլետարիատի վերջնական յաղթանակի համար՝ պատմութեան դր ժամանակահատուածում էլ այն մղուած լինի:

Հայ իրականութեան մէջ գաղափարի «հանդերձը» 19-րդ դարի 70-80-ականներից ստացաւ ազգային դրոշմ, ինչի խորքերը գրողներին վերստին հասցնում էին արովեանական աւանդոյթների արծարծմանն ու վերարծարծմանը: Ռափայել Պատկանեանի, Բաֆֆու ստեղծագործութիւններում ազգային մտածողութեան գերխնդիրը յաւակնեց դառնալ գեղարուեստական մտածողութեան ճանաչողութեան գրեթէ միակ պատուհանը: Պատմութիւնը և գեղարուեստական հարցադրումները դարձան հակադիր կատաղի կռուաններ, ուր առաջինը գերիշխան յարաձուն հովեր էր ձեռք բերում: Եւ կարծես՝ մինչև մեր օրերը՝ անդառնալիօրէն:

Իսկապէս, քննական ուշադիր հայեացքի դէպքում այսօր էլ կարելի է նկատել, որ պատմականի գերակայութիւնը դառնում է նպատակ, որը «ծածկում է» գեղարուեստական ինքնութեան, մտայնացումի առաջնայնութեան որևէ հնարաւորութիւն: Ըստ էութեան՝ դա գալիս է մեր քաղաքական ձակատագրի սրուած ընկալումից. Բաֆֆուց մինչև Պերճ Զէյթունցեան ձգուող գրապատմական ընդհանուր միտումի մէջ ազգայինը մաքառում է, անդուլ պայքար մղում և ներկայանում իբրև փրկարար հաւաքական յիշողութիւն:

Եւ նոյնիսկ կարող ենք անկեղծ լինել. ինչ է մեր փնտռածը այսօրուայ օտարագիր գրողների մէջ՝ ազգային ինքնութեան «աբստրակտը» և դրա դարձերեսը՝ ուժացումը «համաշխարհայնացումի» խորապատկերի դի-

5 Վլադիմիր Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 48, Եր., «Հայաստան», 1983, էջ 286-287:

մաց: Մա միայն գրական նիւթի յարաբերակցութեան հարց չէ՝ ազգային գրական բաւիղներում: Ընդունենք, որ այս հանգամանքը նկատելիօրէն «խանգարում է» գրական պարբերացման փորձին, քանի որ անընդհատ արծարծում և վերարծարծում է գեղարուեստական իւրաքանչիւր, յարաբերականօրէն ինքնուրոյն շրջանում, այս անգամ օտարագիր գրական արտադրանքում: Գուցէ դա ևս պատահական հանգամանք չդիտենք, որովհետև, շատերի կարծիքով, օտարագիր գրականութիւնը հայ գեղարուեստական մտածողութիւն է,– թիւր տպաւորութիւն:

Եւ դա հենց թէկուզ այն պատճառով, որ լեզուն խաղում է վճռորոշ դեր գրական պատկանելութեան տիրոյթներում, ինչի գիտակցութիւնը պատրաստ էին զոհաբերել և հիմա էլ զոհաբերում են շատ շատերը՝ «վառ» հայրենասիրութեան թելադրութեամբ՝ Յակոբ Օշականի «լեզուէն անդին» բնորոշումից սկսած, Ուիլեամ Մարոյեանի՝ հայ գրական ընտանիքին մաս կազմելու խանդավառ կոչնակ-պահանջագրով, և այսպէս շարունակ:

Հայ նոր գրականութեան պարբերացման մէջ բաժիններն ու ենթաբաժինները ունեն հետևողական զարգացման կորագիծ: Նախ, դա կապուած է թեմայի, ապա միջավայրի փոխներթափանցումների հետ: Կապերի ու ազդեցութիւնների առումով այն ևս ուշագրաւ խորհուրդ ունի՝ կապուած միջազգային գրական և քաղաքական ընթացքների հետ:

Այսպէս, Մխիթարեան շրջանը իր երկու թևերով ներառում է եւ գեղարուեստական հայեացքի ինքնուրոյնութիւն, եւ պահանջների միասնական քննութեան եղանակ: Այն իւրատեսակ գրական վերածնունդի փորձ է, ազգային դիցաբանական պատմական ուրոյն հետաքրքրութեան դրսևորում, որը թերևս ամէնից կարևորն է գրականութեան պատմաբանի աչքին: Ինչ-որ տեղ այն վերաճում է շարժումի, սակայն՝ ոչ լիարին ճանապարհով: Գրաւիչը ազգային դիցապատմական հարուստ զինանոցն է, որը դառնում է ստեղծագործական քննական նպատակային առանցք, բայց ի տարբերութիւն գրապատմական նիւթի՝ հայ կլասիցիստների և հոգևոր հայրերի թեմաների մշակման փորձը թոյլ է, անբաւարար, շարժումը չի դառնում գրական «միմեսիս», ժանրերի լայն ընտրութիւն չկայ: Աւելին, պատմական հայեացքը խեղդուում է չոր ու անկենդան շարադրանքում՝ լինի դա դիցաբանական բանաստեղծական փորձ (Յովհաննէս Վանանդեցի, «Մուգայք Արարատեան» ժողովածուն, Դուկաս Ինձիճեան, Արսէն Բագրատունի, Յարութիւն Աւգերեան, Եղիա Թովմաճան և ուրիշներ), թէ պատմական դրամայի հին կամ նոր կառոյց (Պետրոս Մինասեան, Յարութիւն Ալամդարեան, Յակոբ Կարինեան, Սրայիօն Հէքիմեան և ուրիշներ) ընդհուպ «կլասիցիստներ» Մկրտիչ Պէշիկթաշլեան և Պետրոս Դուրեան:

Գրական շարժման վերաճելու կլասիցիստական փորձը, սակայն, անհետևանք չանցաւ. այն նախապատրաստեց տեսական և տեսաբանական հարուստ ընկալումների դաշտ, որտեղ վիթխարի էր Եդուարդ Հիրմիզեանի դերը:

Գրական պարբերացման առումով հայկական կլասիցիզմը իբրև շարժում խաղում է կամրջի դեր հայ հին և նոր գրականութիւնների սահմանագլխին: «Դժգոհութեան» ինչ վերաբերմունք էլ ունենանք, այն առնուազն կէս դար նախապատրաստել է հայ նոր գրականութեան թեմատիկան՝

ՀԻՄՆ ԱՔԱՐՆԵՐ

Ե (ԺԵ) քառի, թիվ 3 (43) հուլիս-սեպտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

պորտալարով կապուած մնալով հայ հին գրական ասանդներին ու ասանդոյթին: Հայ նոր գրականութեան ձևաւորման առաջին տասնամեակներին հայկական կլասիցիզմը եղել է մայրուղի, բանուկ ճանապարհ, գրական ըմբռնումների ստուգութեան կայուն, թէկուզ միակողմանի արժեչափ:

Հայ նոր գրականութեան միասնական ուղու ձևաւորումը կապուած է լեզուական անցման օրինաչափութիւնների հետ՝ աշխարհիկ խօսակցական լեզու, գրական լեզուի մշակման խորը ընթացք են արևելեան, են արևմտեան հատուածներում: Գրապայքարի բովով յստակուեցին նոր գրականութեան հիմնարար բովանդակային ուղղութիւնները, որոնք հրաշալի ձևակերպեց Խաչատուր Աբովեանը «Վերք Հայաստանի» վէպի «Յառաջաբան»ում: Գրողի հանձարը ոչ թէ առանձին-առանձին՝ լեզուի, գրական հերոսի կամ գրականութեան հիմնարար նիւթերի ընտրութեան հիմնախնդիրն էր, որը շատերը դիտում էին իբրև գերխնդիր, այլ գրական նոր մայրուղու ուրուագծումը:

Անչափ դժուար է ի մի բերել լուսատրիչ գրողի գեղարուեստական մեթոդի և գրականութեան պարբերացման յարաբերակցութեան խնդիրը: Անդրադառնալով նրա ստեղծագործութեան խորքերում ռէալիզմի ելևէջումներին՝ հարկ է թէկուզ հպանցիկ նկատել, որ այստեղ գործում է գրականութեան ֆորմալ տրամաբանութեան իներցիան, թէ իբր լուսատրական շարժումը և ժամանակիզմը անհամատեղելի բաներ են, և եթէ մենք նրան կապում ենք Լուսատրութեանը⁶, ապա պարտաւոր ենք իբր հաշտուել այն մտքի հետ, թէ Խ. Աբովեանի վիպաշխարհը իրապաշտական նախահիմքեր ունի:

Դեռևս 1960-ական թթ. Սերգէյ Սարիսեանը տագնապով ընդգծում էր, թէ մեզանում դեռ չենք շահել ժամանակիզմի դատը, չենք յաղթահարել ռոմանտիզմի սոցիոլոգիական ընկալման նախապաշարումները: Ս. Սարիսեանը զգուշացնում էր գերծ մնալ հակադրութիւնների երևութական

⁶ Գրականութեան տեսութեան մէջ Լուսատրութեան և ժամանակիզմի համադրութիւնը այժմ նոր մօտեցումների արդիւնաւոր օրինակներ է երևան հանում: Այն Խ. Աբովեանի առիթով ևս ստեղծագործական նման կարևոր առանձնայատկութեան քննութեան մէջ բերում է իր նպատը: Յիշենք ռուս գրականագիտութեան մէջ անցեալ դարի 60-70-ական թթ. **Անդրէյ Դմիտրիևի** «Ռոմանտիզմ և Լուսատրութիւն. պայքար թէ՛ համագործակցութիւն» խորագրով ծրագրային ուսումնասիրութիւն-յօդուածը, որը բաւական կրքեր յարուցեց իր համարձակ ոչ-խորհրդային դրոյթներով, մտածողութեան արտառոց թարմութեամբ, իր ժամանակի արևմտաեւրոպական նորագոյն ուղղութեամբ: Տե՛ս “Вопросы литературы”, М., 1972, № 10: Անելի վաղ՝ 1966-ին, նոյն հեղինակը հրատարակել էր իր նշանաւոր «Ռոմանտիզմի գեղագիտութիւնը» աշխատութիւնը:

Կարծում ենք, ժամանակն է, որ մեզանում յաղթահարուի Լուսատրական շարժման և ժամանակիզմի անհամատեղելիութեան ընկալման և հակադրման գայթակղութիւնը՝ իբրև ռէալիզմի և ժամանակիզմի բնական անհաշտութիւն: Մինչդեռ Խ. Աբովեանի մեծութիւնն այն է, որ նա գիտակցաբար փորձում է սինթեզել շարժումն ու ուղղութիւնը՝ ռոմանտիզմի ընդհանուր դրօշի ներքոյ: Հետաքրքիր է, որ այս իրողութիւնը ժամանակին արժանացել է Բաֆֆու ուշադրութեանը, և կարծես թէ վերջ. այն շարունակում է մնալ եզակի փաստալից օրինակ քիչ հարցապնդուած և լրջմիտ ուսումնասիրութեան կարօտ:

Երիցս ճիշդ էր գրականագէտ Եղուարդ Ջրբաշեանը, երբ Խ. Աբովեանի ստեղծագործութիւնը գնահատելիս ամփոփում էր, թէ գրողը «ձգտում էր համադրել համաեւրոպական գեղարուեստական մեթոդների արդիւնքները և դարձնել հայրենի գրականութեան սեփականութիւն»: Տե՛ս **Էղուարդ Ջրբաշեան**, Գրականութեան տեսութիւն, Եր., ԵՊՀ հրատ., 1980, էջ 414: Այդ ամէնի հետևանքով է, որ նա յայտարարում էր, թէ տարբեր մեթոդներ չեն կազմաւորուել Խ. Աբովեանի ստեղծագործական ներքին շերտերում, ահա թէ ինչու ինքը այստեղ պարզորոշ տեսնում է «ժամանակիզմի առաջին յստակ արտայայտութիւնը»:

փաստերից, իրաւացիօրէն ընդգծելով, որ գաղափարական սրուած ուղ-
ղութիւնը հայկական ռոմանտիզմի կարևորագոյն առանձնայատկութիւնն
է: Խ. Արովեանի ռոմանտիզմի բոլորից հետևողական պաշտպանը հաս-
տատում էր, թէ արդէն «...իր ծագման շրջանում (այսինքն՝ արովեանական
բուն գործունէութեան ժամանակներում-Ս.Դ.) հայկական ռոմանտիզմը
գերազանցապէս գաղափարական շարժում էր, և, այս իմաստով էլ, նա-
խապէս վերապրեց մտաւոր ձգտման և իրական հնարաւորութիւնների
հակասութեան տուայտանքը»⁷: «Գաղափարականի» տակ Ս. Սարինեանն
արդէն բերում է ազգայինի ենթահողը և բարձրացնելով Խ. Արովեանի
հարցադրումների համահայկական ձողը՝ ընդգծում է, որ ազգային շար-
ժումների մեկնութեան առումով հենց Խ. Արովեանի շնորհիւ ռոմանտիզմը
մէկ քայլ առաջ է հայկական իրապաշտ պատկերացումներից: Իսկ սա
կարևոր նկատառում է. բանն այն է, որ իրապաշտական գրական շարժումը
դեռ չէր էլ կազմակերպուել, որպէսզի կարողանար հակադրուել ռոման-
տիկական կառոյցի ազգային և գեղագիտական շերտերին:

Սա, թէկուզ ներթափոյց, մտածողութեան համարձակ ձևակերպում էր,
որը Ս. Սարինեանի առումով գնահատելի է. յիշենք, որ «դրսում» արդէն
աւարտուել էր քաղաքական բարեբեր հալոցքը, և մենք սահուն մուտք
էինք գործում բրեժնևեան ճահճացման շրջանը, որը նորից յուշելու էր կի-
սակատար խօսքի քաղաքական ապահովութեան առաւելութիւնները:

Առաձգական ու տարակուսելի է Խ. Արովեանի և հայ գրականութեան
նոր շրջանի ձևաւորման պատմութեան մէջ ոչալիզմի ու ռոմանտիզմի
հաշտ ու խաղաղ գոյակցութեան հաստատումը, մինչդեռ մեր գրականա-
գիտութեան մէջ տարակարծութիւնները միշտ էլ փորձել են բխեցնել
«Վէրք...»ից: Չի փրկում նաև Ա. Պուշկինի առիթով լայն տարածում գտած
այն դրոյթը, թէ իբր մեծ գրողները «չեն կարող տեղաւորուել» մէկ ուղղու-
թեան շրջանակներում: Կարող են, ինչպէս, Դ. Վարուժանի պարագային՝
մեր յիշատակած սկզբունքով, փոխնիփոխ օգտուել տարբեր զինանոցնե-
րից, սակայն, ի վերջոյ, կայ հայեացքի ընդհանրութիւնը, գրողի ճանաչո-
ղական փորձառութիւնը:

Խ. Արովեանի ստեղծագործութեան մէջ գեղարուեստական արտացոլ-
ման ռոմանտիկական և ոչալիստական յարաբերակցութիւնը ժամանակին
հարցապնդել է գրականագէտ Արսէն Տէրտէրեանը, որը գտնում էր, թէ
«Վէրք...»ի հեղինակը «...ռոմանտիզմի ոչալիստն է, այսինքն՝ ինչպէս հա-
մաշխարհային նշանաւոր ռոմանտիկները, նրա մօտ ևս կենցաղի նկա-
րագիրը տարւում է մեծ մասամբ ոչալիզմի աջակցութեամբ, իսկ գլխաւոր
հերոսը՝ ռոմանտիզմով»⁸: Ա. Տէրտէրեանը, ըստ էութեան, «ոչալիստա-
կանից» պահում է միայն ոճաւորման փորձը և այն դիտում ռոմանտիզմի
իւրայատկութիւն: Նա անյաջող է ձևակերպել նաև «կենցաղը՝ ոչալիզմով»
եզրոյթը: Դուրս է գալիս, ոչալիզմն ու ռոմանտիզմը Խ. Արովեանի ստեղ-
ծագործական խորքերում «անբաժանելի գեղարուեստական սիմբիոզ» են:

**Շարունակական այս բանավէճը ունի նաև խորը հակասութիւն.
Եթէ մենք ընդունում ու ճանաչում ենք Խ. Արովեանի ռոմանտիզմը,**

7 Սերգէյ Սարինեան, Հայկական ռոմանտիզմ, Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1966, էջ 77:
8 Արսէն Տէրտէրեան, Երկեր, Եր., 1960, «Հայպետհրատ», էջ 126:

ապա ուրուագծում ենք, որ գրողը ձևաորում է գրական ուղղութիւն, կանգնած է նրա զարգացումների ու պայքարի ակունքներում: Եւ ընդհակառակը. եթէ ընդունում ու ձանաչում ենք Խ. Աբովեանի ռէալիզմը, ապա չենք էլ յապաղում խորհրդահայ գրականագէտների ոգով ածապարել գրողին կարգելու իբրև հայ ռէալիստական արձակի հիմնադիր:

Մայրուղին սկզբում անհրապոյր էր, նրանով փորձում էր առաջին քայլերը կատարել, բայց «...անի, լեզուս փակ էր, աչքս՝ բաց, բերանս՝ բռնանձ, սիրտս՝ խոր, ձեռս՝ պական, լեզուս՝ կարձ... մեր գրքերն էլ՝ գրաբառ, մեր նոր լեզուն էլ՝ անպատիւ, որ սրտիս հասրաթը խօսքով յայտնէի»⁹:

Եթէ անկեղծ լինենք, այդ «մայրուղին» գիւղամիջեան ձանապարհ էր. ու՛ր էր տանում՝ փակուղի թէ՛ երոպական խաչուղիներ, դժուար էր ասել: Բայց առաջինը «քանաքեցի գեղձուկը» որոշեց անցնել այն՝ հաստատելով «անպատիւ լեզուն», բայց անպայմանօրէն հետևելով գրական երոպական չափումներին: Նա վէպ գրեց ու հասկացաւ, որ ընտրած ուղին ճիշդն է, քանի որ իր սկզբունքների համաձայն դրեց ժողովրդի կեանքը, ապրելակերպը, երագը, պատմութիւնը, «քաջութիւնները», ինչպէս պահանջում էր գերմանական գեղարուեստական փորձը: Նոր գրականութեան ազգային շաղախին նա գումարեց գրականութեան յաւերժական նիւթերի գունեղութիւնը՝ բարեկամութիւնը, սէրը, զգացմունքների ամբողջութիւնը, ներաշխարհն ինքնին, որը Խ. Աբովեանը համարում է «մարդու սրտի խարջ»¹⁰:

«Վէրք Հայաստանի» վէպի «Յառաջաբանը» գրական շարժման, գրական ուղղութեան դրօշն է և գրական պարբերացման ազդարար: «Վէրքը...» ձանապարհ է բացում նոր սերնդի համար, և ժամանակակիցները անմիջապէս արձագանգում են Խ. Աբովեանի կոչնակներին: Նրա ձանապարհով գնում են արդէն նրանք, ովքեր թօթափել են գրաբարը, կլասիցիստական գրական կաղապարները, ովքեր ընդունում են Խ. Աբովեանին իբրև գաղափարի և շարժման ուսուցիչ: Եւ խնդիրը մէկ շրջանի պարբերացումը չէ, այլ նոր գրականութեան սկզբնաւորման պահանջի խորը գիտակցութիւնը:

Մենք այսօր էլ արովեանական շրջանակի մէջ ենք՝ արևելահայ թէ արևմտահայ: Ի հարկէ, Խ. Աբովեանից յետոյ ստեղծուել են անելի կատարեալ արժէքներ, Խ. Աբովեանին «գլել անցել են» նրա աշակերտները (Յովհ. Թումանեան, Ե. Չաքենց, ուրիշներ), բայց նրանց բոլորի համար Խ. Աբովեանն անվերապահ ուսուցիչ է, գրական նոր շրջանի պարբերացման նախակարապետ, նոր գրականութեան հիմնադիրը, տեսողութեան առումով՝ մեծագոյնը:

Փաստօրէն, պարբերացման առումով Խ. Աբովեանը երկակի դերակատարութիւն ունի. նա պատմական շրջանի բերումով գլխաւորում է 19-րդ դ. առաջին կէսի գրական շարժումը, որն անվերապահօրէն, իր ըմբռումների թելադրութեամբ, զուտ ժոմանտիկական է: Կարելի է նոյնիսկ նկատել, որ Խ. Աբովեանը գրական ուղղութեան բացարձակ խնդիր չի դրել իր առջև. գրականութիւնն ինքը արդէն զգացական, սենտիմենտալ աշխարհն է:

Եւ եթէ անելի ուշադիր ենք նայում Խ. Աբովեանի գեղարուեստական բնագրին, տեսնում ենք ժոմանտիկամի երկփետկման, «ծնադեան» պահից

9 Խաչատուր Աբովեան, Երկեր, Եր., «Սովետական գրող», 1984, էջ 6:

10 Նոյն տեղում, էջ 9:

արդէն երկձիւղ զարգացումը՝ իբրև գրական շարժում և իբրև գրական ուղղություն: Դա ենթազգիտակից մօտեցման հետևանք է. գրողն այդպէս է ընկալում գրականությունը, նա հաշուի է նստում գրական իր «անկատար լսարանի» հետ, նրա հետ գնում է պարզ գրոյցի՝ լեզուական խորքի իմաստով: Պարզությունը նա տարածում է նաև նիւթի մեկնութեան վրայ. գրասեղանի առջև նա արդէն որսում-կռահում է ընթերցողի արձագանգը, գրեթէ առաջին ու վերջին անգամ մեզանում կիրառում է հաւաքական լսարանի գործօնը՝ կարծես առարկայօրէն պատկերացնելով խմբուած անգրագէտ, բայց պարզսիրտ գիւղական միջավայրը, ուր մէկը կարդում է, նաև պիտի հասցնի բացատրել, նաև փոքրիկ «ընդմիջումներ» անել, ինչը ասելի յայտնի է գրականութեան մէջ գեղարուեստական «շեղում» կամ «զեղում» անունով:

Այդպիսին է գրականութեան նշանակութեան ըմբռնումը Խ. Աբովեանի մօտ. նա ունի իր գերմանական ուսուցիչները և առաջին հերթին՝ Ֆ. Շիլ-լէրը, և ունի գրականությունը ազգային ասանդոյթին ու միջավայրի ընկալումների մակարդակին պատշաճեցնելու բացառիկ խոր գիտակցությունը-ըմբռնումը: Նրա աշխարհում ռոմանտիկական գրականությունը պարզապէս գրականությունն է. ուրիշ մակարդակներ չկան:

Գրականագէտ Պիօն Յակոբեանի բանասիրական որոնումների շնորհիւ բացայայտուել է Խ. Աբովեանի ուղղակի ռոմանտիկական խոստովանությունը՝ շիլլէրեան արմատով, որի էությունը միշտ ջանացել են շրջանցել Խ. Աբովեանին պարտադիր իրապաշտ կոչող գրական ուժերը. «Ի հարկէ, օտարերկրեայ ոչ մի գրող,- շեշտում է հայ նոր գրականութեան հիմնադիրը,- հենց սկզբից ինձ այնպէս չի հրապուրել, ոչ մէկն այնպիսի մնայուն, անջնջելի ազդեցություն չի թողել ինձ վրայ, ինչպէս Շիլլէրը. և եթէ կայ մէկը, որն իմ ապագայ կեանքում հոգուս պահապանը, իմ առաջնորդն է լինելու, ապա դա պէտք է միայն նրա (Ֆ. Շիլլէրի - Ս.Դ.) վեհ հոգին լինի»¹¹:

Այս առումով արբովեանական դպրոցի ետարբովեանական առաջին կարևոր քայլերից մէկը մենք տեսնում ենք ոչ միայն ժանրերի ընդլայնման միտումը, այլև գրական ուղղությունների խորքային, տարանջատուած հասկացությունների մշակումը:

Դասական ռոմանտիզմին արբովեանական հաստատարութեան առու-

¹¹ «Գրական թերթ», Եր., 1958, 22 Օգոստոս:

Ճիշդ էր, Ֆ. Շիլլէրի ազդեցությունը Խ. Աբովեանի համար գեղագիտական կայուն նախասիրություն է Եւրոպայում գտնուելու ժամանակից ի վեր, բայց և ստեղծագործական կոնկրետ հիմնադրում ունի: Այսպէս, Մարքիզ Պոզայի գաղափարատիպը օգնեց Խ. Աբովեանին մտահայելու ժողովուրդների ազատագրութեան պայքարի պատմականությունն ու անհրաժեշտությունը՝ իբրև քաղաքակրթութեան, մարդկային առաջադիմութեան լծակ: Ասմիջապէս գալով Նար-Դոսի գնահատությունների կարգին՝ ընդգծենք, որ Մարքիզի կերպարի ռոմանտիկական մեկնաբանումը չէր բաւարարելու նատուրալիստ հեղինակին, որը «Նոր դար»ի էջերում պաթետիկ հնչեբանգով պահանջում էր Դոն Կարլոսի ռէալիստական հոգեբանական հարցադրումների հետևողական կարգ մեր ազգային մշակոյթի մէջ, երբ բացականջում էր՝ «Տուէք ինձ մարքիզ պոզաներ»:

Միայն այստեղ չէ, անշուշտ, շիլլէրեան ներկայությունը Խ. Աբովեանի ստեղծագործական շերտերում: Ազատաբաղձութեամբ ներծծուած «Վիլիելմ Թել» դրաման ցոյց էր տալիս գերմանացի գրողի հակուածությունը դէպի ռոմանտիզմի էպետիկական ժողովրդի իդէալներին ծանայություն, անձնագոհություն, էպիքական դիցագնական տարրերի ներհիւսում: Խ. Աբովեանը հենց այս տարրերն է ածանցել իր պաշտելի հեղինակից: Պատահական չէ, որ եւ Թելը, եւ Ադասին կեանքի նպատակների գեղարուեստական ընդհանրություն են ներկայացնում:

ՀԻՄՆ ԱՔԱՐՆԵՐ

Ե (ԺԵ) քարի, թիվ 3 (43) հուլիս-սեպտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

մով առանձնանում են Բաֆֆին և Պ. Դուրեանը: Յայտնի են Բաֆֆու «ռոմանների տեսության» գիտակից քննության փորձը և Պ. Դուրեանի «Միրել» ծրագրային բանաստեղծության առաջին վեցեակի գեղարուեստական բնագրի տեսական բնութագրիչ վերլուծությունը, որը բացառիկ երևոյթ է մնում երկրարեայ ազգային բանաստեղծական զարգացումներում:

Անելորդ չի լինի այստեղ յիշատակել ռոմանտիկական ազգային գրական ուղղության այն տարանջատումը, որ կատարում է Բաֆֆին՝ իրեն Խ. Աբովեանի և Ծերենցի հետ դիտելով գրական ճակատի նոյն գծի վրայ: «...Վէպերը իբրև ժամանակի մտածությունների և զգացումների արտայայտություն, իրանց հիմնական գաղափարներով բառական նման են միմեանց, թէև իրանց բովանդակությամբ և տիպերով բոլորովին տարբեր են»¹²: Բաֆֆին արմատապէս տարբերում է «իրենց» գեղագիտական վիպապաշտ հիսուսածքը արովեանական դպրոցի ռէալիստ գրողների՝ Պռոշեանի, Աղայեանի, Սարգսեանցի քննական մեկնակէտից, թէև ընդունում է գրական զարգացման ազգային միասնական հունը: Կարելի է այս շարքում անելացնել նաև Գաբրիէլ Տէր-Յովհաննիսեանի անունը, որի «Տէր Սարգիս» վէպը բարձր էր գնահատում Մ. Նալբանդեանը:

Ինչ վերաբերում է Պ. Դուրեանի գնահատությանը, նա ամէն ինչից վեր տալիս է գրական ուղղության, նրա առանձնայատկությունների կազմախօսությունը: Խ. Աբովեանը դասական ռոմանտիզմի տարերային, անորոշ ըմբռնումն ունի, Պ. Դուրեանը, ուղիղ գծով շարունակելով գրականության նշանակության բացայայտման կռահելիությունը, հասցնում է այն համակարգուածության, ինչն արդէն արովեանաչափ տեսողական հանձարի կնիք ունի:

Հայ նոր գրականության զարգացման երկրորդ աստիճանը սկսում է 19-րդ դ. 70-ական թուականներից: Բայց այս ժամանակահատուածում էլ ասիա Պ. Դուրեանը խաղում է գրական պարբերացման նոր շրջանի բերդապահ աչալուրջ բանաստեղծի դերը՝ մի ոտքով կապուած մնալով արովեանական շրջանին, միսով սիրայօժար բախելով գրական արևմտեան ուղղության բաց դուռը, ճիշդ և ճիշդ Խ. Աբովեանի պէս: Միայն թէ Պ. Դուրեանի համար գերմանական ռոմանտիզմն արդէն «երէկուայ» օրն է. իրեն Ֆ. Շիլլերի փոխարէն սկսել են դիպօել Ա. Լամարթինն ու ֆրանսիացի անուղղայ ռոմանտիկները, այդ թում՝ տրանսցենդենտալիստ երգիչները:

Հայ գրականության մէջ ռոմանտիզմն է, որ կրննի վրայ բացում է ազդեցությունների դարպասները՝ որպէս գեղարուեստական մշակոյթի բնարուխ զարգացման նախապայման: Դա չէր թաքցնում Խ. Աբովեանը, երբ գրում էր ռուս նոր գրականության սկզբնաւորողներից Վասիլի Ժուկովսկուն՝ ռուս ռոմանտիկ առաջին բանաստեղծին. «Երբ ես Եւրոպայում առաջին անգամ տեսայ արուեստներն իրենց իսկական լոյսով և զգացի նրանց ներգործությունը նախևառաջ եւրոպացիների եւ յետոյ էլ ինձ վրայ, ապա իմ առաջին և ամենագեղեցիկ ցանկությունն այն եղաւ, որ ես աշխատեմ տարածել այդ արուեստներն իմ հայրենի երկրում ևս: ...Ո՛վ չի ճանաչում այն երկնային, սիրտ ազնուացնող հմայիչ ուժը, որ գտնուում է արուեստների մէջ (գրական ուղղության կողմնորոշման և մեթոդի ընտ-

12 Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, Եր., «Հայպետհրատ», 1964, էջ 124:

րութեան ինչպիսի՛ խորթափանց կանխահասութիւն – Ս.Դ.), և զոր հոգին, շարունակում է Խ. Աբովեանը, – կարող է ամէնից աւելի զգայուն լինել նրանց հանդէպ, եթէ ոչ արևելցու կրակոտ, երևակայութեամբ հարուստ հոգին»¹³: Պարզորոշ է, «կրակոտ արևելցին» ինքն է, հարուստ երևակայութեամբ սնուցուողը՝ հայ առաջնակարգ գրողը, ռոմանտիզմը՝ նրա գրականութեան մայրուղին:

Խ. Աբովեանի համար ռոմանտիզմը գրական լինելութեան միակ ճանապարհ-ուղեցոյցն է: Գրականութեան պատմութեան պարբերացման խորքում ռոմանտիզմը, անշուշտ, բերում է յատկանիշների համակարգ և կանխորոշում գրականութեան այս կամ այն շրջանը: Այսպէս, 19-րդ դ. 70-80-ական թուականները ռոմանտիզմի տիրապետութեան ժամանակներն են. մենք յիշատակում ենք Մուրացանի գրեթէ միայնակ դերը 90-ական թթ. և իր անունով նաև ենթաժամանակաշրջան պարզում՝ կոչելով «ուշացած ռոմանտիզմի» փուլ:

Հայկական ռոմանտիզմի առարկայացում յատկանիշները սերում են Խ. Աբովեանից և հասնում Մ. Պէշիկթաշլեանի, Մ. Նալբանդեանի, Պ. Դուրեանի, Ռ. Պատկանեանի, Բաֆֆու, Ծերենցի, Մուրացանի որոշարկուած ընկալումների համակարգ: Եւ ուղենիշն էլ ուշագրաւ է՝ գրողի ներքնատես կռահումներից մինչև յատկանիշների համընդհանուր ճանաչում: **Ռոմանտիզմի շարունակական առկայութիւնը վկայող յարացոյցում մենք մատնանշում ենք գեղարուեստական մտածողութեան եղանակը՝ իբրև երևակայութեան և իրականութեան համադրութիւն, պատկերների սուր հակադրական յաջորդականութիւնը, կոնտրաստների նախասիրութիւնը, պաթետիզմի, տառապանքի և ողբերգութեան տեսողութեան տարրերը, որոնցով երևան են գալիս իրենց հայեացքում և գործունէութեան մէջ ծրագրային գաղափարներ կրող հերոսները, նրանք, ովքեր ունեն անհատականութեան բարձր ցուցանիշներ, նրանք, որոնց մէջ անհատականութիւնն ու անհատապաշտութիւնը յաճախ ընթերցողի համար անտես միջավայր են դառնում, ուր այդ հերոսները իրականում յաղթահարում են չերևացող պատնէշները:** Ընդ որում՝ որքան անտես է յաղթահարման ճանապարհը, այնքան բարձր է գրողի ռոմանտիկական ներուժը:

Աւելորդ չէ նկատել, որ գրականութեան զարգացման խթաններից մէկը դարձաւ ռոմանտիզմի հուժկու ազգեցութեան նոր փուլը՝ նէօռոմանտիզմը, արդէն 20-րդ դարասկզբին՝ իր արևելահայ և արևմտահայ համակարգում պարբերացման պահանջով, որը ենթադրում էր գեղարուեստական մտածողութեան խոր տեղաշարժեր, ազատաբաղձ ոգու նոր արմատի փնտռուք և գեղեցիկի վերասլաց քննութիւն:

Այստեղ արդէն անվերապահ առաջնորդը ամեհի Դանիէլ Վարուժանն է, որը գրականութեան զարգացման ճանապարհի վրայ վերագտնում է Մարդ-Հերոս-Աստուած/«հին աստուածներ» շղթայուած եռամիասնութեան «հեթանոս» բանալին:

Այսպիսով, հայ նոր գրականութեան պարբերացման աստիճանաւո-

13 Խ. Աբովեան, Երկերի Լիակատար Ժողովածու, հ. 10 (լրացուցիչ), Եր., «Հայպետհրատ», 1961, էջ 166-167:

ՀԻՄՆ ԱՔԱՐՆԵՐ

Ե (ԺԵ) քառի, թիվ 3 (43) հայիս-մեպրեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

րումը գալիս է Խ. Աբովյանի՝ «էլ ետ իր առաջին փառքի» ակունքի պատմական որոնումով: **Երկրորդ** պարբերացման սահմանը բացում է դասական ժամանակի Պ. Դուրեանը՝ գեղեցիկի ու դաշնի, բնութեան ու աստուածամարտության անվերջանալի բացայայտումներով, իսկ **երրորդը** կազմաւորում է ԲաՖֆին՝ պատմութեան արմատի մէջ ազգային կեցութեան փիլիսոփայութեան ընդգծումներով:

Պ. Դուրեանը, ԲաՖֆին, ինչպէս նաև Դ. Վարուժանը 20-րդ դարասկզբին հայ նոր գրականութեան պարբերացումները նշանաւորող հզօր դէմքերն են, որոնց ոգեշնչել է Խ. Աբովյանի լուսաւոր նախատիպարը, որոնց համար «Վէրք...»ի հեղինակը մնում է գրական նոր, երոպական մակարդակներին հետամուտ մեծագոյն նախակարապետը:

Այս գրական չորս գագաթներին 20-րդ դարի քսանական թթ. պատրաստ էր արդէն դիմաւորելու հինգերորդը՝ ողբերգական Չարենցը:

Summary

THE QUESTION OF PERIODIZATION OF THE ARMENIAN NEW LITERATURE

On the trajectory of Kh. Abovyan's romanticism and literary movements of the 19th century

Souren D. Danielian

Romantic direction had composed the first stage and had prepared successive process periods in the sources of Armenian new and newest literature. In this article substantiates the exclusive role of Khachatur Abovian in the first steps of Armenian new literature, for his this literature is the expression of romantic breath, the impact of imagination and reality, establishment of ideals. Due to Khachatur Abovian the way of Armenian literature new way we named Abovianian. To collect in different times the attitude and displaying of Armenian and Russian literary mention (Nshan Mouradian, Arsen Terterian, Arshak Chopanian, Sergey Sarinian, Hrand Tamrazian, Eduard Jrbashian, Viktor Vanslov, Andrey Dmitriev and others) to realism and romanticism, we have concluded that the gradual changes of literature have been in the spotlight of possession of romanticism. Khachatur Abovian (in the 19th century, first half), Petros Dourian (the end of 60's of 19th century and beginning of 70's), Raffi (70-80's of 19th century) and Daniel Varoujan (beginning of 20th century) were theoretical ground for separate literature movements and periodical forms. And their creative achievements, as a matter of fact, were become the basis for the development of Armenian New Literature main periods. We have tried to establish that the strong conflict between romanticism and realism was the great stimulus for growing of Armenian Literature, his inseparable richness.